


կ'ընակին եղեր, կ'ըսեն թէ թաթարաց արշաւանքին ատեն թաթարներ այս վանքի բոլորտիք եղած չէրք քանդելով, միայն Վմբէթն ալ այն յիշեալ չէնքբու քարու կիրերու մէջ մնալով կէսէն աւելի թաղուած է. իրաւ այս զարմանալի չէնքը զինքը տեսնողներուն զարմանք կը շարժէ. վերջոպէս իբրեւ միաձուլ արձան մը հայոց այն ամենու գեղեցիկ Ռստան գաւառի ստորոտ կեցած իւր տխուր դէմքով ճանապարհէն անցողներուն սիրտը առ ինքն կը գրաւէ: Վիւզիւս Մրեւմտեան կողմը մեծ ահագին կոնաձեւ քարանձաւ մը կայ. քարանձաւիս հիմը մինչեւ ծովու խորութեան յատակը հասած է: Քարանձաւի գօտիէն սակաւ ինչ վեր փորուած է, և Վագա ամրոցի հիմը այն քարանձաւին մէջ դնելով մինչեւ բլրակին հասուցած են: Իսկ ամրոցը բոլորովին աւերակ եղած է. միայն թէ քանի մը բուրգերու ու պալատներու աւերակները կանգուն կեցած են:



ԱՐԿԱԾՔ

ԱՐԻՍԹՈՆՍԻԻՍԻՆ

(Հարունակութիւն, աւս թիւ 1):

«Բաջ գիտեմ որ, բաւ ինձ անիկայ, Յրկրիս վրայ մէկը չկայ որ բազդին գառնութեանը չըհանդիպի իրեն կենաց մէջ, որքան որ մեծ կըլլայ անոր պարգեւած յաջողութիւնը, այն համեմատութեամբ ալ անոր ի վերջոյ հասուցած աղետից ծանրութենէն երկրն չելու իրաւացի պատճառներ մարդ կունենայ. ուստի ես որ այսքան տարին երէ ի վեր անոր բարիքները կը վայելեմ, գիտեմ որ ինձ կը մնայ նաեւ

սոսկալի աղետից յորդու թիւն մը, և թէ այս կէտէս չըջանամ առաջն առնուլ շողորորթ բազդին մատնութեցոյ:

Այս խօսքերն ըսելով իւր մատեն խիտ թանկագին մատանին հանեց, զոր ստատիկ ալ կրտիրէր, և իմ ներկայութեանս աշտարակի մը բարձրութենէն ծովուն մէջ ձգեց զայն, յուսալով թէ այս կորստեամբը գոնէ իրեն կենաց մէջ միանգամ բազդին դառնութեանց նշաւակ եղած կըլլայ, բայց այս կուրծքթիւն մ'էր, որ իրեն յաջողութենէն պատճառեցաւ. աղէտք կամ չարիք չեն անոնք՝ զորս մարդ ինքնին գիտութեամբ իրեն կը պատճառէ և կամ կընտրէ, այլ անոնք են չարիք՝ որք անակնունելի և բռնադատեալ զօրութեամբ կը հասնին աւնոց վրայ, զորս Մտուածք պատուհասել կուզեն: Փոյլիկբառ չէր գիտէր թէ բազդին անգթութեանց առաջն առնելու միտի և ճշմարիտ միջոցը՝ իմաստութեամբ և չափաւորութեամբ աւնոր տուած սեւտի և ունայն պարգևներէն ետ քաշու իլն է:

Բողոքը՝ որուն ուղած էր զոհել իւր մատանին, չ'ընդունեց այս նուէրը, և Փոյլիկբառ իրեն կամաց հակառակ տւելի երջանիկ գտնուեցաւ, քան յառաջ: Չուկ մը՝ կըլած ըլլալով այս մատանին, Փոյլիկբառի մարդիկներէն բռնուցեաւ և անոր տունը տար ոււելով, խոհարարը անոր արգանդին մէջ գտաւ մատանին և անմիջապէս բռնաւորին տարաւ որ տեսնելով զայն շատ տրամեցաւ բազդին՝ իրեն յաջողելու այնքան յամառելուն համար, բայց ժամանակը կը մերձենար՝ ուր անոր բոլոր յաջողութիւնքը, յանկարծ սոսկալի ճախորդութեանց պիտի փոխուէին: Պարսկից դարիւս մեծ թագաւորը Յունաց դէմ պատերազմի ելաւ. և իսկոյն Միդի ծովը գերաց և

անոր մերձակայ կղզեացոյն գաղթա-
կանները նուաճելով, Սամսո կղզին ալ
տուաւ և բռնաւորը յաղթուեցաւ .
(Օրոնթ՝ որ մեծ թագաւորին կողմա-
նէ կը հրամայէր, բարձր խաչ մը կանգ-
նել տալով բռնաւորը անոր վրայ սպան-
նելը : Այսպէս ահա այն մարդը՝ որ այն-
քան հիացուցիչ յաջողութիւն մը վա-
յելած էր և որ չէր կրցած երբէք
թշուառութեան ինչ ըլլալը գիտնալ,
զոր ինքն անձամբ որոնած էր, մեռաւ
տանջանաց ամենէն սոսկալի տեսակով :

Այսպէս ահա մարդուն ոչինչ այն-
քան չըստառնար որքան որ մեծ յաջո-
ղութիւնը, որուն կը հետեւի մեծ դժ-
բաղդութիւն : Այս բաղդը՝ որ այն-
չափ անգթաբար կը ծաղրէ ամենէն
երեւելի մարդիկները, կը քաշէ կը հա-
նէ միանգամայն ամենաթշուառ մար-
դիկները փոշուոյ մէջէն : Ազգիակիրա-
ւորն փառաց անւոյ բարձրութենէ գա-
հափիժելով, զիս քաշեց հեռացուց իմ
ամենաթշուառ վիճակէս, ինձ մեծ
հարստութիւն և ճօխութիւն տալու
համար : Պարսիկները զանոնք ինձմէ
չը բարձին, և ընդ հակառակն իմ մար-
դիկներ բժշկելու դիտութեանս վրայ
մեծ համարմունք ցոյց տուին, և չա-
փառորութեանս վրայ հիացան, որով
տպրած է իբրեւաւորինքով եղած ժամա-
նակաւ անոնք՝ որ անոր վտառաւ թեմէն
ղեղձուած էին և անոր իշխանութե-
նէն յոխացած զանազան տանջանքնե-
րով սրտածուեցան :

Արտիշտուս մէկու մը շարութիւն
ըրած չէի, և ընդ հակառակն ձեռքէ-
նկածին չափ բարիք ըրեր էի, ուստի
յաղթականք ինձ միայն խնայեցին և
սրտաւով վարուեցան ինձ հետ : Ամեն
մարդ ասոր վրայ ուրախացաւ, որով
հետեւ ամենուն սիրելի էի ես, և ես
ոյս յաջողութիւնը առանց ուրիշին
նախանձը գրգռելու կը վայելէի . քան

զի ոչ խառութիւն, ոչ ամբարտաւա-
նութիւն ոչ ազահութիւն և ոչ ա-
նիրաւութիւն, ցուցած չէի երբէք
իմ վրայ :

Քանի մը տարի ալ բաւական հան-
գարտութեամբ Սամսո կղզին մնացի,
բաց վերջապէս սաստիկ իղձ մը զգա-
ցի ապա ի իսի քաղաքը վերստին տես-
նելու, ուր տեղ այնքան քաղցրութե-
մանկութիւնս անցուցեր էի : Այսպէս
կը յաւաստի լըինը գտնել, որ զիս սը-
նուցած և որ իմ բաղդաւորութեան
ալ տառջին պատճառն էր : Այս քա-
ղաքը հասնելով, իմացայ որ լըինը
իւր ստացուածքը կորսնցնելէն և իւր
ծերութեան թշուառութիւնները մեծ
տրեւութեամբ կրելէն զինի մեռած է :
Այս մոխրոց վրայ ծաղիկներ և ար-
տասուք թափելու գնացի և շիրմին վը-
րայ ալ յարգական մակագրութիւն
մը գնելով, հարցուցի թէ իւր որդիքը
ինչ եղեր են : Ինձ ըսին որ անոր որ-
դիկներէն մէկը միայն մնացած էր (Օր-
սիլըք անուն, և այն ալ չը կրնալով
իւր հայրենեաց մէջ անշուք և անը-
շան կեանք մը վարելու հանգուրժել,
ուր իրեն հայրը այնքան պերճաւթեամբ
փայլած էր, օտարական նաւու մը մէջ
մտած ծովուն որ և իցէ կղզւոյ մը
մէջ անշուք կեանք մը վարելու գնա-
ցած էր : Այս վրայ ինձ յաւերցուցին
թէ այն (Օրսիլըքն ալ գարբաթի կըղ-
զայն առնելու նաւարկելութեան պա-
տահած էր, և այսպէս իմ բարերար
լըինի ընտանիքէն ոչ որ մնացած էր :
Իսկայն մտածեցի անոր բնակած տա-
լը գնել և նաեւ այն բարեբեր դաշ-
տերը կամ անդէրը զոր ունէր չըջա-
կայից մէջ :

Այս վայրերը վերստին տեսնելու
չափազանց ուրախ էի, վասն զի ինձ
կը յիշեցնէին այնպիսի սիրուն հասա-
կի մը և այնպիսի բարի տիրոջ մը

քաղցր յիշատակը : Ինձ այնպէս կ'ե-
րեւէր թէ տակաւին այն ծաղիկ հա-
տակիս մէջ էի , ուր Ալինին ծառա-
յած էի :

Հազիւ թէ իրեն ժառանգութեան
ինչքերը իւր սիրտատէրներէն գնեցի
և ահա Ալադամէն ստիպուեցայ գնալ ,
որովհետեւ հայրս փոխթրութեւ
մայրս յիշող մեռած էին : Եղբայր-
ներ ունէի , որոնք յիմասին ըստ չէին
ապրեր : Ալադամէն հասնելուս պէսանոնց
ներկայացայ պարզ հագուստով մը ,
ինչքերէ զուրկ մարդու մը նման : Երբ
զիս տեսան շատ զարմանք ցոյց տուին
մտածելով որ այսպէս իրենց հօրը փո-
խթրութին ժառանգներուն թիւը
կաւենար . որովհետեւ պիտի ստիպուէին
անոր փոքր ժառանգութիւնն ալ այն
համեմատութեամբ բաժանելուստի կամե-
ցան իմ ճնուանդս ուրանալ և դատա-
ւորաց առջեւ մերժեցին զիս ճանաչե-
լու : Այն ժամանակ ես ալ անոնց այս
տմարդութիւնը սրտով չէի համար .
յայտնեցի որ ես կը հաւանիմ իրենց
համար անձանթ ըլլալ . այն պայմա-
նաւ որ իրենք ալ իմ ժառանգներս
ըլլալէ բոլորովն դադրին :

(Պիտի շարունակուի) :

ՈՍԻՐԲ ՓՐԿՉԻ ՎԱՆԲ

ՅԵՐԱՍԱԼԱՅ

Վենետիկ Ս . զազարու վանքը տը-
պագրուած մեծ աշխարհագրութեան
մէջ անգագուշութեամբ սխալելով Ե-
րուսաղէմի մէջ Ս . Փրկչի վանքն հու-
նաց վանք ըստած է : Այս սխալը Ե-
րուսաղէմի մէջ Աղգիս համար ծանր
հետեւութիւն կրնայ ունենալ ապա-
գայ ժամանակներու մէջ . որուն ա-
ռաջն առնելու համար Սիօնի միջոցաւ
հրապարակաւ կը ծանուցանեմք նոյն

աշխարհագրութեան այս կէտին մէջ
ունեցած սխալը : Այս Ս . Փրկչի վա-
նաց Հայոց Աղգիս բլաղուն վրայ Ե-
րուսաղէմի ստորագրութեանց և Հան-
նէ վարդապետի պատմութեանը մէջ
ընդարձակ խօսուած է : Այսին զատ
1200 տարիէն աւելի հինօրեայ հրո-
վարականերով ալ կը հաստատուի Ե-
րուսաղէմի մէջ Ս . Փրկչի վանքն Հա-
յոց Աղգին Եկեղեցին եւ մատուռն
ըլլալը :

Սոյն վանքի ստորագրութիւնն 1859
ին Վանացի Տաքարնը տպագրուած
Երուսաղէմի Ստորագրութիւնն առ-
նելով կը գնեմք նաեւ Սիօնի մէջ յի
գրտութիւն հասարակաց :

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՐԱՆԱԿՈՂ ՄԱՆ ԳԵՂԱՔԻՍ ՍՐԲՈՅ
ԵՐԱՍԱԼԱՅԻ

Յաղագս աւրբ փոխ վանաց Բեյ :

Երեւոյ ընդ դուռն Վատի , զոր
Փրկչի դուռն կոչեմք , և է յհարա-
տկողմն քաղաքիս Երուսաղէմի : Հան-
դէպ դրանն է ուր ֓րկչի վանքն մեր ,
և է բարձրարեւմ պարսպաւ , և միով
երկաթի դրամբ ամրացեալ . որ ունի
առ հիւսիս , և մասնէ ընդ հարաւ :
Ի մասնէն յի նեքս չորս աստիճանաւ
լընէ յի գաւիթն . որոյ երկայնութիւն
է 30 ոտնաչափ , և լայնութիւնն 24 .
և երեք աստիճանաւ երանէ յի դուռն
Եկեղեցւոյն , յի ձախմէ յի յետուստ
դրանն են գերեզմանք հանգուցեալ
Պատրիարքաց :

Աագ խորանի վէմն է իսկ կախա-
րիչ Վէմ կենսատու սրբոյ Գերեզմա-
նին Քրիստոսի , որ յատուկ պարգեւ
իմն շնորհեալ է Աղգիս մերում յի